

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՍ ՏՕՆԻ ՇՈՒՐՁԸ

„Հորիզոնի“ երեկւայ և այսօրւայ համարներում տպւած է էջմիածնի Ծանձնատոգովի անդամներից մէկի՝ պ. Էդիլեանի «անձնական կարծիքը» հայ տպագրութեան և տառերի գիւտի սո՛ւր կատարելու ժամանակի և այդ առթիւ կազմելիք Փօնդի նպատակի մասին:

Պ. Էդիլեանը իր մասնաւոր նամակում այն ցանկութիւնն է յայտնում, որ վիճելի որոշ կէտերի մասին որքան կարծիքների բազմակողմանի փոխանակութիւններ կատարւեն՝ խնդիրն այնքան աւելի լուսարանւած կը լինի: Մի բան, որ աւելի արդիւնաւէտ կը լինէր, եթէ էջմիածնի Ծանձնատոգովի վճռից առաջ մտածւէր:

Սակայն ինչպէս յօդւածի ընդհանուր տրամադրութիւնն է՝ ինչո՞յց տալիս, պ. Էդիլեանը անձնապէս դէմ չի, որ ժամանակի վերաբերմամբ գէթ այժմ համաձայնութիւն կայանայ. իսկ ինչ վերաբերում է կազմելիք Փօնդի նպատակին՝ նա ցանկանում է, որ էջմիածինը հաստատ մնայ իր որոշմանը, քանի որ իր կարծիքով զըզրոցական Փօնդը աւելի անհրաժեշտ է և կեանքի աւելի անյետաձգելի պահանջ, քան թէ գրական Փօնդը: Միւս կողմից էլ, սակայն, դէմ չէ, որ զըզրոցական Փօնդի կողքին տեսնի և գրական Փօնդը, միայն ոչ էջմիածնի Ծանձնատոգովի կողմից, այլ՝ Թիֆլիզի: „Օրինակ ես տալու եմ—գրում է պ. Էդիլեան—թէ զըզրոցական և թէ գրական Փօնդին իմ կարծեցածի չափ՝ այսպէս վարւողների թիւը, կարծում եմ հազարաւորների պէտք է հասնէ»:

Մենք մի կողմէ ենք թողնում պ. Էդիլեանի կարծիքը հիմնաւորող պատճառարանութիւնները, որովհետև զըզրանք այնպիսի ջուր վերցնող խնդիրներ են, որոնց մտածնալը՝ զուցէ և առանձին վիճարանութեան երկի նըկատի, բայց երբէք ներկայ գէպքում կարծում ենք, առնապէս միամտու-

խնդիրը վճռող արգումենու Օրինակ
 հէնց այն խնդիրը, թէ «գրագիտու-
 թեան տեսակետից, մենք յետ ենք
 մնում մեր գրացիներէրց»։ կամ թէ
 «Քրտեղ է տեսնւած, որ վերին իշխա-
 նութիւնը նպաստներ չտայ դպրոցնե-
 րին։ Ժողովրդին այդպիսի օգնութեամբ
 պէտք է կապել իր ծխական դպրոցնե-
 րի հետ. նա երբ իմանայ, որ ամեն
 տարի գոնէ չնչին նպաստ է ստանում
 կենդանոց, այն ժամանակ և այդ
 կենդանոցի կարգադրութիւններին և
 ցանկութիւններին աւելի սիրով կեն-
 թարկւի...»

Ընդունում ենք, որ գործնական տե-
 սակետից նման օգնութիւնը կարող է
 որոշ նշանակութիւն ունենալ ժողո-
 վրդի համար, բայց թէ զա հիմք
 դարձնել ազգեցութիւն ձեռք բերելու՝
 թիւր է, որովհետև զրամը չէ, որ կա-
 պելու է ժողովրդին «վերին իշխանու-
 թեան» հետ, այլ կան բազմաթիւ կեն-
 սունակ և աւելի կարևոր հանգամանք-
 ներ, որոնք ուժեղ կապ կարող են
 հանդիսանալ, քան թէ «տարեկան չըն-
 չին նպաստը»։

Ապա թող մի էջմիածինը դիմադրի
 իր ժողովրդի պահանջներին բաւարար-
 ութիւն տալուն և փորձի «տարեկան
 չնչին նպաստով» միայն կապ պահպա-
 նել իր ժողովրդի հետ, կը յաջողի՞
 տեսնենք։

«Թիֆլիզի Յանձնաժողովը չի կարող
 արհամարհել էջմիածնի կազմակերպու-
 թեան գոյութիւնը, որովհետև նրա ձեռ-
 քի տակ կազմակերպութիւններ կան,
 որոնց միջոցով նա տօնին կարող է
 բաւականին ընդարձակ ծաւալ տալ
 ի վնաս Թիֆլիզի Եանձնաժողովի. օր-
 նա կարող է կարգադրել, որ բոլոր
 Հայոց դպրոցներում և եկեղեցիներում
 տօնի հոկտեմբերի 13-ին. այդ կար-
 գադրութիւնը կարող է այլ հայաբնակ
 վայրերի վրայ ևս տարածուի»։

Այսպիսի սպառնալիքներով և ոչ էլ
 յամառութեամբ չէ որ էջմիածինը կա-
 րող է խնդիրը յաջող վճռել և նպա-
 տակին հասնել. որովհետև նման լա-
 բուրակներ կարող են և միշտ հակառակ
 արդիւնք տալ. որ նման ղէպքերում ար-
 համարհելով ժողովրդի կարծիքն ու
 ցանկութիւնները «էջմիածնի կարգա-
 դրութիւնները» կարող են մնալ լոկ
 կարգադրութիւններ, իսկ եթէ պաշտօ-
 նապէս էլ յայտարարել «դպրոցներում
 և եկեղեցիներում տօնի հոկտեմբերի
 13-ին» այնքան անշուք կարող են կա-
 տարել որ հաւասար կը լինի չկատա-
 րելուն։ Մի բոպէ պատկերացնձում է
 իրեն պ. Էդիլեանը, որ էջմիածնի կար-
 գադրութեամբ ժողովրդի ձեռնբեցու-
 թիւնը ոչնչացնելով՝ հոկտեմբերի 13-ի
 հրամայած մաղթանքները կարող են
 տեղի ունենալ «չորս պատերի» մէջ՝
 առանց ժողովրդի։ Սրանք խնդիրներ
 են, որոնց մօտից անտարբեր անցնել
 յամենայն ղէպս էջմիածնին չի յաջող-
 ւի։

Սակայն էջմիածնի Եանձնաժողովի
 անդամ պ. Էդիլեանի յօդածներին

մէջ կայ մի լաւ տրամադրութիւն, վէ
 եթէ կուզէք, մի բնական վախ, թէ՛ չը
 լինի մեծ տօնը շլատամբ կորցնի իր
 համազգային լինելը. և այդ վախն է
 որ նրան բերում յանգում է մի խելա-
 ցի եղբակացութեան. «գործը պէտք է
 այնպէս տակտով տանել, որ հնարա-
 ւոր չափերով քիչ մարմիններ ղժգոհ
 մնան...»

Եւ այս ցանկութեանը չէ, որ «Հո-
 րիզոն»-ը պիտի դիմադրէ. ընդհակա-
 նակը, «Հորիզոն»-ի բունած գիրքով վա-
 ղուց ի վեր չափազանց պարզ է եղած,
 որոշ և կորեկիտ. նրա միակ ցանկու-
 թիւնն էլ հէնց այն է, որ ոչ մի-
 այն «քիչ մարմիններ ղժգոհ մնան»,
 այլ բնաւ ղժգոհներ չլինեն և զրա
 համար «Հորիզոնը» բազմիցս անգամ
 կրկնել է իր էջերից և կրկնում է
 ներկայումս, թէ՛ էջմիածինը մեծ տօ-
 նը համազգային դարձնելու համար
 պարտաւոր է խնդիրը խողաղ, և որ
 զլիսաւորն է, խելացի ճանապարհով
 վճռել, իսկ զրա համար, նա պիտի
 թողնի իր ինքնակալ դիրքը և յարզի
 նաև ժողովրդական տարբերի ձայնը,
 մի ձայն՝ որը աւելի շուտ է հնչել,
 քան թէ իրեն էջմիածնինը։

Այդ ձևով միայն էջմիածնի յօրե-
 լեանական Եանձնախումբը կարող կը
 լինի հարթել իր իսկ ձեռքով ստեղ-
 ծած կնճիւրը։

Ա. Ղազարեան

ԱԶԳԱՅԻՆ ՄԵՄ ՏՕՆԸ

Անցեալ անգամ քննութեան տառնք
 երբ տօնելու հարցը, այս անգամ խօ-
 սելու ենք տօնը ինչպէս յաւերժացնե-
 լու խնդրի մասին։ Այս հարցը ևս վի-
 ճելի է. էջմիածնի Եանձնաժողովը
 որոշել է կազմել «Բարոցական Ֆօնդ»,
 իսկ Թիֆլիզը «գրական ֆօնդ»։ Այս
 կէտի պատճառաւ է. Շիրվանզադէն
 կձու և վիրաւորական դարձածքներով
 յարձակեց էջմիածնի Եանձնաժողովի
 վրայ։ Զարմանալի տխուր գոյնիբով
 էր նկարագրւած էջմիածնի Եանձնա-
 ժողովը նրա յօդածում. բանից դուրս
 է գալիս, որ այնտեղ նստողները չեն
 հասկանում, թէ ինչ է գրականու-
 թիւնը և յարգանք չունին ղէպի նա։

Նախ սկսենք այս վերջին կէտից և
 յետոյ աստիճանաբար կանցնենք միւս
 հարցերին։ Ընդհատ է իսկապէս պ. Շիր-
 վանզադէի դատողութիւնը. եթէ նա
 մի փոքր պաղարիւն լինէր, կը տես-
 նէր, որ էջմիածնի Եանձնաժողովի
 անգամները հին կամ նոր գրականա-
 ղէտներ են, շատ կամ քիչ չափերով
 աշխատել են հայոց գրականութեան
 հարստացման համար, սիրում են զը-
 բականութիւնը, գիտեն նրա մեծ ար-
 ժէքը և ոգևորում են նրանով։ Ընդհատ է
 էջմիածնի Եանձնաժողովի մէջ չկան
 զեղեցիկ գրականութեան ներկայա-
 ցուցիչներ, սակայն գրականութիւնը
 գրականութիւն է. գիտական-մասնա-
 գիտական խնդիրներին մասին գրողը
 այնքան գրականազէտ է, որքան մի